



ԵՐԾՈՒՐ

ՎԱՍՊՈՒՐԱՆ

ԹՈՌՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵԻՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԵԳԱՅ
ՈՐ ԴԱՎՆՏՈՍՊ

Գ	ՀԱՅՈՐ	1859	ԱՊՐԷԼ
---	-------	------	-------

ԱՎԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱՆՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵԼԵՑԱՇԷՆ ՀԱՐՑԷ

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՃԱՇՏԱՐ ԲԱՆԱԿՈՒՍ ՄԱՐԱԶԱԳՈՐ
ԿԱԹՈՒԿՈՍ ԱՐԵՆԱՏՆ ՀԱՅՈՐ

Յիս փեմականի պատմությունն Ադամանդ եղևայ՝ որ
ճշգրտա եւ ղարմանալիս Կժուգրիսոյ ղճնաշխարհիկ վա-
րուց երանելի կուսիցն Հախիսիմեանց, որք յարեւմտից

ամենագեղ արեգակունք ծագեցան հայարնակ Աշխարհիս՝
 եւ սուրբ աղօթից իւրեանց ջերմեռանդութեամբ հալեալ
 վտանեցին զսառն կռամուրութեան՝ ի հիւսիսարնակ ազանց .
 պիտոյ էր հոգեւորական զարմանալի ըմպելեաւն առ լցեալ
 երգիչ ոմն հոգեւոր բանահիւս, զի զնոցին կուսական զամ
 բնծ վարուց զգով՝ հռետորական եւ երաժշտական հան
 գիսիւ ի լուր աշխարհի հնչեցուցեալ՝ տարեկան տարփալի
 տօնիւ զյիշատակս նոցին երախտաւոր մայրութեան յեկե
 ղեցի աստուծոյ յիշատակեսցի անուռացապէս : Յոյր սակս
 Տեառն Կոմիտասայ Ս. Կաթողիկոսի յաջողեցաւ բարձրա
 նալ յաթոռ Լաւաւորչական :

Սոյն սա տեսեալ զվկայարանս սրբոց կուսից հնուցեալ
 եւ խարխալեալ յոյժ՝ ձեռն արկանէ ՚ի հիմանդ նորոգել՝
 ՚իփառս նոցին սուրբ մայրութեան եւ ՚ի յիշատակ իւրն
 գովանի անուանս. որպէս վկայէ պատմագիր Յովհան Կաթո
 ղիկոս յասելն :

„ Զայտու ժամանակու մեծ հայրապետն Կոմիտաս ,
 „ զվկայարան սուրբ Հռիփսիմեանցն՝ որ նախ խրթին եւ
 „ փոքրատեսակ իմն էր շինեալ . եւս հրաշապէս եւ վայելուչ
 „ եւ նազելի եւ պայծառ շինուածով յարդարէր , ուր եւ
 „ պատահեալ սուրբ տիկնոջն Հռիփսիմեայ՝ ոչ սակաւ լինէր
 „ մխիթարութիւն բնաւ իսկ Հայաստանեայցս : Եւ էր նա
 „ կնքեալ մատանեաւ սրբոյն Դր/գորի եւ սրբոյն Սահա
 „ կայ , սպա եւ մեծի հայրապետին եւս Կոմիտասայ ոչ
 „ համարձակեալ բանալ զնայ՝ եղ եւ զիւր եւս կնիք ՚ի
 „ վերայ նորայ , իսկ չափ հասակի տիկնոջն , ինն թիգ եւ առ
 „ չորս մատունս : Ապա շինեալ ղեկեղեցին սուրբ եւ անդ
 „ անփոփեալ ժողովէ զնշխարս սուրբ տիկնոջն ՚ի պատ
 „ րաստեալ իւր կայանան :

Այսպիսի Աստուածային եւ հանկարծադէպ պատուական գանձու հանգիպեալ երանելին Տէր Սոմիտաս, զմայլեալ երկնաւոր անպատմելի ուրախութեամբ՝ երգեաց շայրբեհական սքանչելի բանահիւսութիւնն այն հռետորական ճարտարութեամբ. որ է :

« Անձինք նուիրեալքք սիրոյն Բրիստոսի

« Երկնաւոր նահատակքք եւ կուսանք իմաստունքք :

« 'Ի պարծանքս ձեր բարձրացեալ տօնէ,

« Մայր սիօն դստերօքն իւրովք :

Տես 'ի շարականի 'ի կանոնն Հռիփսիմեանց ցվերջ :

Եւ այսորիկ ապու մեծաջան աշխատութեամբ ձեռնարկեալ քակէ գիտյտակերտ դմբէթ կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյն Խջմլածնի որ 'ի Վաղարշապատ, եւ նոր 'ի նորոյ գարմանհրաշ յօրինուածով նորոգէ զնա տաշելովք ընտիր քարամբք եւ չքնաղ արուեստակերտութեամբ :

Առաւել եւս զհանդէս Աստուածապաշտութեան իւրոյ պայծառ փայլեցուցեալ հոգիաբուղիս վարդապետութեամբն յօրինեաց բազում եւ ազգի ազգի ծառս եւ մանաւոր թուղթս առ այլ եւ այլ անձինս. վասն ծիսի եւ ողջամիա վարդապետութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ : Հաստատեաց նա եւ բազում երեւելի շինութիւնս եւ նորոգութիւնս յայլ եւ այլ տեղիս հանդերձ օրինաւոր կարգադրութեամբ :

Իկաց այսպիսի եկեղեցաշէն եւ ազգայնոյ աշխատութեամբ յաթող Հայրապետական Ժամանակս ութ փոխի տա Բրիստոս, յամի 625, որոյ մարմին մեծաւ յուղարկաւորութեամբ ամփոփի 'ի շիրիմ փառաւոր ընդ այլ Հայրապետս :

Ուսարուք ո՛ր լուսածին որդիք մօրս սրբոյ. 'ի հոգի զմայ-

լեալ հոգեւորական երգս երգել երաժշտի : որով միշտն
 փառաբանի էակն անհուն եւ պարարին հոգիք սրբանուէր
 եւ մի զանառակ լրբութիւնս, որք զամօթոյ եւ զպատկս
 ռանոց զսուրբ առաքասն իբաց բառնան յամօթիւս
 դիմաց : որք գրգռեն զզգայութիւնս եւ տան անօրինաբար
 մտածել զանկայելս սուրբ կրօնի եւ մարդկութեան : քանզի
 զինչ են գուտնիք եւ երգք անառակութեան եթէ ոչ ըստ մե,
 ծին Սարգսի լրբութիւնք անառակութեանց, որք հեռ,
 ցուցանեն զմարդիկ յաստուծոյ :

Նայեցարուք ի մեծս Տ. Կոմիտաս եւ նախանձաւոր լի
 րուք Աստուածապաշտ շաւղաց նորին : երգել յոժարեցէք
 ըստ Աստուածահօրն Ղաւթի եւ ընտրելոյ՝ սրբենի երգս
 անմահից եւ տաղս Աստուածահաճոյս եւ չափաբերութիւնս
 ի յորդոր կրօնասիրութեան, Ազգասիրութեան եւ ընկերա-
 սիրութեան, զի ընդ ձերն եւ բազմաց տենչանօք լսողաց
 վառեսցի սուրբ սէր զմայլեցուցիչ : զի յափշտակիցէք
 զթմրեալ միտս բազմաց ի բուն աշխարհական անուտեացն զե-
 ցելոց, ի սէր անխառն՝ Աստուծոյ եւ ազգային : զի եւ ձե-
 յիշատակ բարի՝ ի յաւիտեանս անմահացի յէջս ազգային
 պատմութեանց եւ ի տաճարին Աստուածաբնակ : Ըստ
 Տեառն Կոմիտասոյ Սրբազնատուրք Կաթողիկոսիս, որբոր
 նաջան եւ անմահ աշխատութեամբ իւրով՝ քարոզ անրե-
 կայ ընդ այլ բանահիւսս ի տան հայրենւոյ համայն Թոր-
 քոմածին մանկտեաց :

Բ. ՀԱՆԻՒՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ

Բ. ԱՇՈՏ ԵՐԿԱԹ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԵՒ ՔԱԶԱՊԱՆԺ
ԱՐՔԱՑ ՀԱՅՈՑ :

Նահատակելոյն Սմբատայ ժառանգն բարեյիշատակ դիւ-
պագն արքայն Աշոտ , իր անհամեմատ քաջագործու-
թեամբը եւ անպարտելի զօրութեամբը արդարեւ արժա-
նապէս կոչեցաւ երկաթ . որն որ Հայաստանի մէջ եղած
զանազան բարբարոս ազգաց ըրած աւերմունքները անթիւ
կոտորածները տեսնալով , չէ թէ զարհուրելով յուսահա-
տեցաւ , այլ ընդ հակառակն արիւնքալից թեամբ զօրանալով
երկաթի նման խորտակեց անոնց զօրութիւնը . եւ այնպիսի
թշնամեաց հետ պատերազմելը եւ բնաջինջ ընելը՝ իրեն քա-
ջութիւնը ՚ի դորժ գնելու համար մեծամեծ առարկաներ
սեպեց . եւ մանաւանդ մէյմը որ իրեն այնպիսի հայրենասէր
եւ ընդհանուր ազգին բարութեանը համար անձնանուի-
լութեամբ աշխատող հօրը այն թշնամեաց ձեռքովը այնպիսի
չարչարանօք եւ մահուամբ նահատակուելուն պատճառաւ ,
եւ երկրորդ իրեն արեւակցացը ճշուելը եւ չարչարուիլը
տեսնալով , նախանձայեղութեամբ եւ միանգամայն աղ-
գասիրութեամբ բոլորովին այլայլելով եւ դառնանալով կրակ
կարած առանց ժամանակ անցնելու ամէնէն առաջ իր
ողւոյն եւ քաջութեանը համեմատ իր հարազատ Աբաս
եղբայրը իրեն հետ առած , եւ վեց հարիւր հատ ալ ահա-
գնատեսիլ անպարտելի քաջասիրտ եւ ամենի չայկազուն
զօրքեր ընտրելով , առիւծանման դռալով որոտալով ար-

շաւեց զարհուրելի յարձակմամբ Հայաստանի այն քաղաքները եւ գաւառները, այն տեղերն որ Յուսփայ զօրքերն եւ ուրիշ թշնամիք ժողուլուած անխնայ կերպով ազդին հարուածներ կուտային. իր սակաւածիւ զօրքերովը անոնց անթիւ բազմութեանը հետ սաստկութեամբ պատերազմեցաւ եւ յաղթելով զորեց բնաջինջ րբաւ զանոնք իր տէրութեան սահմաններէն :

Հայաստանի բոլորտիբը եղող ազգերը՝ վիւյազնոյս անկարծելի եւ անհամեմատ քաջութիւններուն լուրը համբաւը լսելով զարհուրեցան ու սոսկացին, վախցաւ այս արշաւանքէն ոստիկանն Յուսուփ եւ սկսեց ինքզինքը պաշտպանելու կերպեր մտածել որ, չլրաց թէ Աշոտ իր երկիրը պաշտպանելէն ՚ի գառ միտքը փոխէ՝ ու աշխարհակալութեան ձեռք զարնելով դէպ ՚ի իր տիրած քաղաքներուն վերայ ալ յարձակի ու տիլէ :

Երդարեւ Աշոտ թէ որ կամք ընէր՝ աշխարհակալութիւն կրնար ընել. բայց իր խաղաղասէր գովելի բնաւորութեամբը՝ միայն իր երկիրը պաշտպանելովը դո՛հ եղաւ. եւ նախարարներն ալ այս զօրմանալի քաջութիւնները տեսնալով ու սիրտ առնելով, իրեն հետ միացան եւ ուրախութեամբ թագաւոր օժեցին զինքը : Բայց ափսոս որ իր քաջութեան պտուղը եղող խաղաղութիւնը երկար չտեւեց. վասն զի որչափ որ Յուսփայ խորամանկութիւնն եւ արաբացւոց արշաւանքը դարձեալ խռովեցին զՀայաստան, այնչափ ալ իշխանաց մէջ երկպառակութիւնները շատցան : Աշոտոյ քաջութիւնն խոհեմութիւնն ներողամտութիւնն առաքինութիւնն ու խաղաղասիրութիւնը շատ մեծ երջանկութիւններ պիտի ընծայէր ազգին, թէ որ այն դառն ժամանակին անթիւ ձախորդութիւններն ու անիրաւութիւնն

ներն իր արդարաւեր ոգւոյն դէմ չհակառակէին :

Նիրաւի կը տեսնամք որ Հայկազանց միշտ սիրելի եւ ցանկալի եղած է քաջութեամբ առաքինութեամբ ու քաղաքակրթութեամբ միայն ինքզինքը պաշտպանելը , եւ երկպառակութիւններն որ երբեմն իշխանաց մէջ մտեր է չէ թէ իրենց բնական յօժարութեամբն էր, հապա շատ ժամանակ դուրսէն պատահած ձախորդ դիպուածներէն ու անիրաւ յարձակմունքներէն յառաջ եկած է :

Ինչպէս որ ազգին թագաւորութիւնը կանգուն եղած ժամանակը երեւելի եւ նշանաւոր էր քաջութեան մէջ , որուն զարմանալի դիւցազնական գործքերը շատ ազգեր զարմացուցեր է . ասոր պէս ալ օրէ օր տարուէ տարի կը տեսնամք որ՝ նոյն քաջութիւնը ուսման եւ գիտութեան մէջ յառաջագէմ ըլլալու գործածել սկսած է , որն որ մարդուս գազանաբարոյ թշնամի եղող տգիտութեան հետ պատեւ րամելով այն ցանկալի յաղթութիւնը պիտի ստանայ . եւ լուսաւորեալ ազգերն անոր վերայ քաջութեան նոր փորձ մ'ալ տեսնալով, գովելի եւ պանծալի պիտի հանդիսանայ անոնց առջեւ . երբոր տեսնան այսպիսի ազգ մը թէ եւ աղքատ՝ բայց զարմանալի ջանասիրութեամբ մը մեծամեծ գործքեր յառաջ կը տանի . տէրութիւն իշխանութիւն չունի՝ բայց իր հնարագէտ հանձարովը դժուարները կը դիւրացնէ :

Յայտնի է որ քանի որ ազգը մեկզմեկու ձեռքէ բռնած սիրով միաբանութեամբ ամէն տեսակ բարութեանց եւ առաքինութեանց մէջ օր քան զօր կը զարգանայ , նախախնամութիւնն ալ ինչպէս որ սովոր է այսպիսեաց իր երկնային բարութիւնները եւ երջանկութիւնները առատութեամբ կը պարգեւէ . յոյս մեծ տեսնւմք որ լուսաւորութիւնը

ընդհանուր ազգին մէջ տարածուելու զօրութիւն տալով,
անոր տրամութեամբ լծուառութեամբ ու տգիտութեամբ
անցուցած ժամանակները պիտի մոռցնէ : Եւ դառն ար-
տասութիւն լցեալ աչքերը սրբէ ու լուսաւորէ :

Տ. Կ. ԳԱԼՓԱԳՃԵԱՆ :

Գ. ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՉԱՆԻ. ԿԵՆԴԱՆԱՆՑ ԵՒ ԿՈՒՌՈՒՊԱՆ

ԳԻՒՂԵՐ :

Խիստ սիրուն դիրք մը ունի Սուրբ Խաչի վանքն, որ վա-
նէն երկու ու կէս ժամ հեռի 'ի հլոսիս դարյամ թլա-
կի մը վրայ շինուած է : Բուն մեծ եկեղեցին Սուրբ Խաչի
անուամբ հիմնարկեալ, ունի խիստ ազնիւ տեսքով՝ ար-
տաքուստ 12 անկիւնով եւ վեց լուսամտով դեղնցիկ
կաթողիկէ մը սրբատաշ դեղնագոյն քարերէ կանգնած,
որուն վրայի յիշատակարանն ցոյց կուտայ թէ՛ Երեւանցի
Աւետիս Եպիսկոպոսն Ռ. Մ. Լ. Թուին Հայոց, այս կաթո-
ղիկէն նորոգեր է : Տաճարիս ալ ու ձախ կողմերն՝ Արքայն
Սանդխտայ եւ Արքայն Գէորգայ մատուռներն կան՝ ամուր
կամարակապ. որոնց ձախալի արձանագրութեանցը միջով
այս բանն կ' կարգացուի :

Ի. Ռ. Ճ. Կ. Գ. ԹՈՒՒՆ ՇԻՆԵՅԱՒ. ՍՈՒՐԲ ԽԱԶՍ
ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ. ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԻՍ. ՉԵՌԱՍԻ
ՄԱՀՏԵՍԻ ԽԱՆՕԻՆ, ՂԱՐԻՊՃԱՆԻՆ Ի ՅԻՇԱՏԱՊ

ԻՒՐ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՅՆ . ԻՒՐ ՎՈՂԱԿԻՑ ԽԱՆԱ-
ՂԻՆ ԵՒ ՈՐԴՈՑՆ ԹՈՒՄԱՍԻՆ . ՄԻՆԱՍԻՆ ՄԱՐ-
ԽԱՍԻՆ

Եկեղեցւոյ բոլորտիքը քանիմ կոոր գեղջուկ շինուածներ ալ
կան՝ մարդկանց եւ անասնոց համար : Շրջապատ պարիսպն
կէս բարէ եւ հոմ աղիւտէ բարձրացած է : Երկու դուռ
ունի՝ մեծն . յարեւելս կ'բացուի ուխտաւորաց համար .
որ կնայէ առջեւի փոքրիկ լճակին վրայ : Եւ միւս փոքրն՝
'ի հիւսիս կալի եւ հատեղինաց համար :

Բարեհամ եւ առողջարար ջրով աղբիւրմը ունի վրան
կամար բաժրացուցած . Այս աղբիւրիս համար կոնն թէ
Հօրիսմէ Սուրբ կուսանաց աղօթիւքը բղխած է . եւ գրէ
թէ միմիայն արտաքին զարդն է նոյն մենաստանին :

Ունի իւր բոլորտիքը ըստ բաւականին ոստին եւ ջրաբքի
արտեր՝ որոնք ըստ կարեաց կ'մշակուին վանքին համար ,
որուն բոլոր կառավարութիւնը հիմայ յանձնուած է մի-
նակ մէկ վարդապետիմը՝ որ քանիմը մշակներով կշահուի
նոյն վանուցը մէջ :

Այս վանքիս հնադիտական տեղեկութիւնն իւր իսկ վա-
ւերական կոնդակէն լաւապէս կարէ իմացուիլ՝ որուն
ձիշտ օրինակը ահալասիկ կ'համառօտեմք հոս :

Օրինակ Սուրբ Խաչի վանուոյ Կոնդակին :

« Դ գրանէ Կուռուարշոյ ամենազօր Սրբոյ խաչին
« Բրիատարի գերահրաշ ուխտէս, եւ ձեռամբ Թաղեոս
« Որբաղան Առաքելոյ հիմնարկեալ Տիրամայր Սրբոյ կու-
« տի սքանչելագործ՝ սրբոյ տաճարէս եւ 'ի սրբոց Գայի-
անեանց եւ Հօրիսմեանց մարբափայլ կուսից Առաւածա-

" հաճոյ աղօթատեղ խորանացն եւ սրբոյն Գէորգ այ զօ
 " լաւարին հրաշալի տաճարէ եւ ՚ի յաղտարբիչ յԱւագա-
 " նէ սրբոցն Գայիանեանց , յոր աղօթիւք բղխեցուցին
 " զՊօլոն ՚ի բժշկութիւն՝ բազմատեսակ հիւանդութեանց
 " եւ յայլ ամենայն բազմախուռն սրբոց մասանց եւ նըշ-
 " խարաց , որք ՚ի սուրբ մենաստանս կան հաւաքեալք .

"
 " Եւ ընդ Աստուածապարգեւ շնորհազեղուն օրհնութեան
 " նամակիս՝ ծաներօք սիրելիք մեր ՚ի տէր . ըի թէպէտ
 " զանաղան զօրութիւնք եւ նշանք ամենազօր սուրբ խա-
 " չին Քրիստոսի յայտնիէ սիրելեացդ , սակայն մեք աստէն
 " համառօտեմք թէ վասն էր յիշի Կուռուպաշայ սուրբ
 " խաչի վանք . եւ քան զի այս հրաշալի սուրբ վանքս՝ թէ-
 " պէտ էր յառաջագոյն շինեալ ձեռամբ Թադէոսի սրբ-
 " բազան առաքելոյն ՚ի յանուն Աստուածածին սուրբ
 " կուսի , սակայն մինչ երանելի սուրբ կուսանքն Ղոխիսի-
 " մեանք մայրապետիւն Գայիանեաւ փախստեան պատճա-
 " ռաւ երեսուն եւ եօթ ընկերօք տարադրեալ գնացիւք
 " յարեւմտից յարեւելս ունելով ընդ ինքեանս զարեամբ
 " ներկեալ սուրբ Ղշանն ՚ի կենաց փայտէն եւ եկեալ հա-
 " սին յանդիման բերդին Վանայ ՚ի հարաւոյ կուսէ Շու-
 " միրամտիւրտին , որ առ Կուռուպաշ որպէս պատմէ Զայո-
 " մաւուրն . եւ անդ ՚ի բարձր բլրին տեսին զտեղին վա-
 " յերուչ ինքեանց բնակութեան , ուստի եւ ՚ի բազում ժա-
 " մանակս անդ օթագայեալ ճգնեցին . եւ շնորհօք ամենա-
 " զօր սուրբ խաչին բղխեցուցին անդ ջուր քաղցր եւ
 " բարեհամ ՚ի բժշկութիւն ամենակերպ հիւանդութեանց
 " եւ մանաւանդ տեւդից եւ գիւլլուկ ջերմոտաց .
 " զոր պատճառաւ աւագան սրբոց Գայիանեանց կոչեմք եւ ՚ի

" սուրբ վանքս աղօթելով նոցին ընդ երկար ժամանակս
 " եղև զի մինն երանելի կուսանացն յայնցանէ Սան-
 " դուխդ անունն 'ի խնամոցն Աստուծոյ անդ վախճանեցաւ-
 " եւ կայ սուրբ մարմինն ամիոփեալ ընդ սուրբ սեղա-
 " նովն, եւ առնէ բազում հրաշս եւ սքանչելիս 'ի փառս
 " Աստուծոյ :

" Ըրդ՝ յաղագս այսմ երանելի կուսանաց որք 'ի սուրբ
 " վանս աղօթեցին յիշէ սուրբն Սոփիաս Վաթողիկոս 'Ե
 " միջի Անձինք շարականին ասելով թէ, Սոքա են քարինք
 " սուրբք՝ հիմնեցեալք 'ի յերկրի, 'ի նոյն 'ի նիւթոյ շինեցաւ
 " կաթողիկէ եկեղեցի . բարձրացեալ փառօք 'ի պարծանս
 " խաչին : Եւ վասն այսմ պատճառի հրաշալի սուրբ վանքս
 " այս՝ կոչեցաւ սուրբ խաչ, երկրորդ Գալիլեայ . զի օթաւ
 " բան եղև կենսատու սուրբ խաչին եւ բնակարան չորի-
 " փմեանց սրբոց կուսանացն . վասն այսորիկ բարեխօսու-
 " թեամբ սրբոց կուսանացն եւ շնորհիւ սրբոյ խաչին զա-
 " նազան հրաշս եւ բժշկութիւնս կատարէ սուրբ ուխտս :
 " Վասն որոյ երկրորդ ելլէ պիտոյ՝ զի յայտնի է ամենեցուն,
 " որ հաւատով գան 'ի սուրբ ուխտս եւ լուացեալ լինին
 " յաւազանն Գայիանեանց՝ որպիսի ցաւ որ իցէ շնորհիւ
 " սրբոյ խաչին առ ժամայն փարատի : Ստեւ՝ հաւատով
 " 'ի հեռաստանէ՝ ապաւինողքն եւս զբազում պէս պէս
 " բժշկութիւնս քտեալ են՝ եւ միշտ գտանին :

" Եւ արդ՝ 'ի յերեկոյացեալ ժամանակիս ձեզ օրհնալ
 " հաւատացելոցդ յայտնի է բազմապատիկ ցաւս եւ պաւ-
 " ուն աղբառութիւնս խղճալի վանօրէից մերոց, նաեւ
 " լաւագէտք էք՝ եթէ 'ի ժամանակիս այլազկիբն, որչափ անու-
 " ղորմաբար լիեն, նեղեն եւ կեղեքեն զմեզ : Վասն որոյ
 " յոյսն մեր Զատուած եւ 'ի հաւատացեալ վրիստու-

„ նեայքդ եւ մնացեալ, զի այն սակաւ փառք եւ պար-
 „ ծանք չէ ձեզ, որ յայտքան նեղ եւ դառն ժամանակիս
 „ միշտ զլլթոռն զանապատս եւ զլանհորայս 'ի պայծառու-
 „ թեան՝ եւ 'ի հաստատութեան պահէք եւ իբրեւ զվարդ
 „ փայլեցուցանէք 'ի մէջ փշոյ. որ եւ դթածն՝ Աստուած
 „ միշտ պայծառ եւ հաստատուն պահեսցէ եւ ազատեսցէ
 „ 'ի ծեռաց անողորմ եւ քարասիրտ բռնակալաց . . .
 „
 „ Գրեցաւ օրհնութեան նամակս 'ի Ռ. Մ. Տ. (1802)
 „ Փետրւար 28 'ի Վան .

Կենդանաց,

Հայաբնակ գիւղմբէ ասիկայ, որ ունի 12 տուն բնա-
 կիչ։ Այս գիւղիս բոլի լեռանը սակէն՝ լաւ ջրաղբքի մե-
 ծամեծ քարեր կ'հանուին՝ հեռաւոր տեղերու ջրաղաց-
 ներուն համար։ Ուստի զրէթէ գիւղիս բնակիչքն բոլորն
 ալ նոյն քարահատութեան որհետին կը ծառայեն, որ ըստ
 բաւականին վաստակ կ'բերէ ինքեանց։ Հողն թէեւ շատ
 բերունչէ՝ բայց անձրեւային տարիք լաւ կ'յաջողին սերմա-
 նիք։ Եկեղեցին եւ տաճարն ամուր շինուածք մը ունին։
 Տաճարիս կից փոքրիկ մատուռ մի կայ, որուն մէջ Հին մա-
 հարձան մի եւ վրան կ'կարդացուի այս յիշատակարանս։

„ Ն. Ժ. Զ. (968) ԹՈՒԱԿԱՆԻՆ ԿԱՆԴԵՆՅԱԻ
 „ ՍՈՒՐԲ ԽԱԶՍ 'Ի ՅԻՇԱՏԱԿ ՄՈՒՇԵՂԱՅ ՀԱՅՈՑ
 „ ՎԱՐԴԱՊԵՏԻ։

Լորկու հատ Հին գրչագիր անուանի աւետարաններ կան
 այս գիւղիս եկեղեցին, որոնց պատճառաւ ջերմեռանդ
 ուխտաւորներ միշտ պակաս չեն։ Ասոնց վերջաբանական

յիշատակարանը վարի եջերուն մէջ կերելին •

Կոոպաշ •

62 Տնով զուտ հայաբնակ պիւղ մի է՝ որ ունի կամարա-
կապ տաճարով եկեղեցի մը սուրբ Ստեփաննոս անուամբ •
տաճարին քովերը երկու կամարակապ պատարագամատոյց
խորաններ եւս ունի Ս. Յակովբայ եւ Ս. Գէորգսյ ան-
ուամբ • Հասարակ դրբերէն ՚ի զատ երեք հատ ալ հին-
գրչագիր Աւետարան ունի մագաղաթի եւ բամպակեայ
թղթերու վրայ բոլոր գրով գրուած •

Ղիւղս ունի շատ մը խաղողի այգիներ եւ ջրաղացներ •
որոնք Վարադ լեռնէն ելած յորդագոյն ջրերովը կը դառ-
նան՝ մինակ աշիան եւ գարնան եղանակներն • զի ձմեռ գե-
տըն կը սառի, ամառն ալ նոյն ջուրը վերի արտօրէիցը հա-
մար կը գործածուի •

* * *

Դ. ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

» ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔ ԿՈՐԾԱՆԵԱԼ Ի ՊԱՐՍՊԱՑ, ՆՈՅՆՊԵՍ ԵՒ ԱՅՐ՝
ՈՐ ՈՅ ԽՈՐՀՐԻՌՎ ԻՆՉ ԳՈՐԾԻՑ Է • Առակ ԻԵ. 38 •

Անխորհուրդ մարդը՝ իւր անխորհուրդ գործքերէն ունի
կրել անտարակոյս շատ մը վնասներ • Ինչու որ՝ յառաջադիր
գործոյն վրայ խորհուրդ չէ ըրած թէ արդեօք ասոր վերջն

հարկաւարտի . որով եւ իւր իրաւունքն ալ շատ անգամ
 չը կորսնցնէ « Եւ ՚ի դատաւարանէ դատաւարտեալ դուրս
 կելնէ » : Թող չպատասխանէ այն անխորհուրդն թէ իմ
 դատողութեան սուպարէզն այնչափ հազիւ կրցաւ հասնել .
 զի կը դատաւարտէ զինքն Քրիստոսի այս անսուտ խօսքն թէ
 « Ողբիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք եւն քան զորդիս
 լուսոյ յազգս իւրեանց » : Դ՛ւ ժ. 2. 8 :

Որովհետեւ Աստուած մարդն իշխանական փառօք ճու-
 խողոյդ , տուաւ հոգի բանական եւ ժիւղ լուսաւոր . որպէս
 զի կարող ըլլայ ինքն իւր կենաց նաւը ուղղել . մանաւանդ
 որ նոր շնորհաշուք օրինօք իւր Աստուածութեան տաճար եւ
 տեղի հանգստեան կազմեց . ինչպէս կըլլայ որ Աստուծմէ այս-
 չափ բարերարութիւններ ստանալէն ետք՝ ըսէ թէ ակոր
 եւմ մօտք ու չեմ կրնար լաւ քննել . Ո՛վ մտաւոր մէկ մը
 դէպ ՚ի խիղճդ դարձիր տես թէ ինչ կը հրամայէ քեզի ,
 գիտեմ շատ բարի խորհուրդներ պիտի սորուեցնէ՝ թէ որ
 անոր հետեւիս : Ո՛ր չարագործն կրնայ ստել թէ իմ խիղճս
 այնպէս կը հրամայէ՝ ինչպէս որ ես կը դորձեմ . թէ որ ի-
 րաւունք տուող ըլլայ , Պօղոս առաքելոյ խօսքն հաստատուն
 տպացոյց մը ըլլալով դիմաց կը կանգնէ՝ « Մի կերպարա-
 նիք կերպարանօք աշխարհիս այսորիկ , այլ նորոգեցարուք ՚ի
 նորօգութիւն մօտաց ձերոց , առ ՚ի բննել ձեզ զլաւն » :
 Զօով ժ. 2 :

Ուրեմն իմաստնաւորն Սողոմոն իրաւամբ դատեց , վեր-
 ջապարիսոյ բաղադրի նմանցունելով անխորհուրդ մարդը :
 Կը տեսնանք ամէն կողմէն թշնամիներ ներս կը մտնեն ու
 խկսեն քանդել՝ աւերել եւ գերի տանել . ամէն ստացու-
 յածքը , ինչու որ՝ պարիսպները փլած են մէկ ապաստանարան
 մը չունի որ զինք պահպանէ : Նմանապէս մարդոյս կենաց

Թշնամին բերանը բացած՝ առ ի կլանել կայ ի պատրաստ :
 Փախիր փախիր ողորմելի ափսոս ես. մի Թողուր որ քամե
 երակներուդ կարմրերանդ արիւնը՝ որով հոգիդ ալ պիտի
 նուաղի : Մեծ խոհեմութիւն բանեցնելու է քանի որ այն
 դառն սխալման մէջ ինկած չես. ապա թէ ոչ ինչպէս որ
 մէկ Թռչուն մը արծւոյ ճանկերէն ազատելու շատ դը-
 ժուարիս է՝ այսպէս ալ անխորհուրդ գլորուած անձն՝ իւր
 հակառակորդի ձեռքէն : Ո՛վ նորին Թշուառութեան . ի՞նչ
 պիտի ընէ այն ժամանակ . եւ ոչ մէկ բան մը , ինչու որ՝
 Պօղոս առաքելոյ խօսքը միտք չէ բերեր, որ կըսէ՝ « Եթէ
 զանձինս քննեսք՝ ապա ոչ դատապարտեաք » : Ա. Կորն-
 Թ. ց. ր. Ե. Ա. 31 :

Հատեր անխորհուրդ վարուելով՝ դատապարտութեան
 արժանի գործքեր ըրին . ինչպէս էր մեծն Աղէքսանդր մա-
 կեդոնացին . որ բաւական չսկսելով Մակեդոնիան՝ անխոր-
 հուրդ կերպով յարձակեցաւ բոլոր տէրութեանց վրայ՝ ու
 նուաճեց զանոնք եւ երկիրներուն ալ տիրեց . բայց ի՞նչ օ-
 դուտ՝ ինքը մեռնելէն ետք՝ իր նոր տիրապետած երկիրներէն
 ի՛զատ, բոլոր Մակեդոնիան ալ հերձուած բաժանուեցաւ :
 Այսպէս ալ Արտաշէս եւ նորին յաջորդ Տիգրան, որ
 թէպէտ շատ քաջութիւններ ըրին՝ դողացուցին միանգոս-
 մայն Յունաստանը եւ շատ ալ ուրիշ տեղերը, բայց ի՞նչ օ-
 դուտ, որ Հայաստանի Թշնամիները բազմացուցին : Խըղ-
 ճալի Արտաւազդ յաջորդն Տիգրանայ գերի կը բռնուի
 անոնցմէն՝ որոնք՝ որ երբեմն հալածական կը փախչէին :
 Հայաստան՝ որ կը պանծար իւր ընդարձակութեան վրայ,
 ո՛հ բոլորովին քանդուած՝ իբր մէկ փայր դաւառ մը կը
 դառնայ : Ի՞նչ էր պատճառն , անխորհուրդ գործ, որով
 Հայաստանի Թշնամիներ արթնցան : Այսպէս շատեր մեր

Ժելով իմաստուն խորհրդականաց զգօն խրատներն՝ կը յուշ
սան իւրեանց անխորձ զօրութեանը՝ որով կը պղծան չա-
րաչար ։

Իբր հաստատուն խրատ Թող ըլլայ բանասիրին հետա-
գայ բանը ըսածներուս՝ որ կը գրէ « Երանին Թագաւորի՝
ուսմ առն Թեր կայցեն խորհրդականը իմաստունը . լաւ է նմա
բարեկամ հանճարեղ եւ հաւատարիմ . քան զբանակս յաղ-
թականս » ։

Ուրեմն ջանալու է հեռանալ անխորհուրդ գործքերէ՝
որոնք որ մարդիք անձնապատասն կը նեն . եւ ստանալ բարի
խորհրդականներ եւ ընդունել անոնց բարի խորխուրդը՝ որ
յաղթող բանակի նման Թշնամին ետ կը դարձընէ եւ ինքն
ալ իւր վերջի բարի նպատակին կը հասցունէ ։ Թէ եւ
պատահի ալ որ մէկ ժամանակ մը չը յաջողուի՝ բայց չէ՝
անպատճառ անգին գանձ պատրաստած կըլլայ այնպիսին
ապառնիին համար ։

Լըրանի՝ այն անձին՝ որ այնպիսի բարի խորհուրդներով
կը վարի եւ անխորհուրդ գործքերէ միշտ կը փախչի . զի
այս աշխորհիս վրայ բուրօրութեամբ կենցաղաւարելէն ե-
տեւ՝ հանդերձեալն ալ անոր համար պատրաստած կը մնայ ։

Ա. Գ. Աշխէր . Ժողովարան .

Բայ Լ. Վարդայ .

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆՈՒԿ

Անոր իշխման խելացի,
Որ իշխման իշխանի

Սէկ ծեր դայլմը նենգաւոր
Հալածութեամբ կը հոգնի.
Եւնէր կ'որած յուսահատ
Ար վազվզէր սրբադոհոյ.
Ոտքը թուլցած վար ընկաւ.
Մահուն օրեր շուրջ պատած.
Արկին կեցաւ վեր ելաւ
Պատկած սրտէն վերջացաւ.
Բայց ինչ օգուտ անօթի
Ջուրէն սովէն կը տանջի.
Աչքը տնկած շատ հեռուն
Աղւոր գառնուկմ կ'տեսնէ.
Որ խայտալով եւ ուրախ
Ջուր խմելու եկեր էր.
Պանչեց գառնուկ սիրելի
Ինձի բիւժ Ջուր որ բերես
Չբեղ կ'օրհնեմ շատ ապրես.
Չի ես սաստիկ եմ հոգնած
Ձեռքքս չիյնար իմ ուղած.
Միտք դրած էր անշուշտ
Եւ կըսպասէր չարաչար.
Թէ երբ խաբուի Ջուր բերէ

Անմեղն ընէ իւր պաշար՝
 Խոհեմ գառնուկն անդիէն,
 Պատասխանեյ յօժարեմ,
 Բայց բու կարօտ լեցնելու
 Իմ միտս պէտք է քեզ տալու ։
 Արդ՝ ժամ չունիմ ընելու
 Փափուկ մսերս քեզ տալու
 Հապա պէտք է որ փախչիմ
 Չարքո ժանեաց ազատուիմ
 Աս ըսելով վազմագեց՝
 Զինքըն գայլէն ազատեց ։
 Չար խաբեբայն անդիէն
 Եունչը հատաւ ոռնալէն ։

Ա. Յ. Թօփճաթիւն Աշաիւր
Ժողովուրդայ Լ.
Լաւրդայ

[illegible]

Բողոր աշխարհ կայ եւ մնայ
մաքդիկ եկեալ անցանէն,
Դաշաբ եւ լերինք են մշտակայ
բոյսքն զկարդ Թառամին փ
(Յայտնի եցոյց տէր բնութեան
բնաւ մարդկանց որք լինին,
Թէ զօրութիւն մարմնոց եւրեանց
ոչ յաւելուէ քան զխտին

Չոյն նա եւ մեծ մարգարէն

կանուխ ազգէ բոլորին,

եթէ առուրք կենաց մարդկան

որպէս ըզխոտ անցանեն :

Աւագ մարդկանց թշուառութեան

որ զերթ ծաղկանց թարշամին,

Ո՞րէ անթուլ միշտ ջանացող

ունել զփառս երկնային

Մի միայն նա՝ որ ծառայէ

Ճմարտութեամբ Աստուծոյ,

Ջանմահութիւն նա ժառանգէ

եւ փայլի միշտ զօրէն լուսոյ

Քանզի մընայ իկենցաղոյս

բարի համբաւ իւրոյ անուան,

եւ յիշատակ անմահ գովի

դարուց իդարս յաւիտեան :

Ինքըն յանձայն գերեզմանէ

նոր քանդակեալ տառիւ խօսի,

եւ իւր հոգին զերծեալ բանտէ

թռուցեալ իվեր յեթերս հանգչի :

Եթէ զայս փառք անմահութեան

բաղձամբ եւ մեք ըստանալ,

Բռւռըն հարցուք նոր շնորհաց

յերկինս իվեր ճախրեցեալ :

Այսպէս զնախնի զարդարութիւն

ըզգենուցումբ մեք հաւատով,

եւ ընկալնումբ զիւր բաղմարդիւն

ըզձրի շնորհսն փափաքելով :

Ա . Վ . Պարտաւորութիւն :

Ե. ԹԱՆԿԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Օրինակ վերահանել 41-րդ գրքից Ա-Երանի
վերջաբանին .

” Իծագման ճշմարիտ արեգականն եւ իյայանիլ Աստուծոյ
” տուածն բանի նորագոյնարժ բերկրանօք պայծառացան
” արարածք ամենայն . զի զԹափանցիկն եւ զգերալրա-
” ցեալ լոյսն ընդ յաւիտենիս խառնելով՝ գեղազարդեալ
” փարթամութեամբ անպարագիր եւ Աստուածունակ բը-
” նութեամբն զարդարեաց՝ եւ նախահայրն յըստուերական
” նիրհմանէն խաչակարկառ եւ բեւեռապինդ բազկաւ
” ազատեցաւ ի խաւարային եւ ի մեղսսէր բանտէն .
” Չորից Աւետարանչացն որք գետորէն պղպճահոս բղխեն
” ի տանէն տէրունի իյայդիս հայրատունկ
Աստեղ կ'սկսէ չորս Աւետարանչաց վրայ երկարօրէն խօսել
գովելով եւ խորհրդաւոր մեկնութիւններ տալով . Ուրիշ
վերջ, այս յիշատակարանս կ'դնէ :

” Արդ՝ ես պարոն Միսան գրել տուի զսուրբ Աւետարանս
” բանս ի յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց
” ի թուարեւութեանս Հայոց Ռ. Լ. Ե. յառաջնորդու-
” թեան սուրբ մենաստանիս տէր Զովհաննէս արհի եպիս-
” կոպոսի, ձեռամբ անարժան եւ սուտ անուն Դաւիթ ա-
” բեղայի անարուեստ գրչի :

” Արդ՝ աղաչեմ զմանկունսդ սուրբ եկեղեցւոյ՝ որք
” հանդիպիք սմա յիշեցէք ի սուրբ յաղօթմս ձեր եւ
” զուսուցիչն իմ Զաքարիայ արհի եպիսկոպոսն եւ զվս-
” նիցս միաբանք

Ըրո-նախ-ի-նը 72 երես պէս .

Առն Գ .

Ա. Աղքատասիրաց ընկերութիւն՝ ամէն եկեղեցւոյ կամ գիւղի ժողովուրդ՝ պիտի կազմէ . եւ նախ պիտի ընտրէ երկու հաւատարիմ եւ հոգեւեւ անձինք . որոց մէկն գանձապետութեան պաշտօն վարէ՝ եւ միւսը հաշուակալութեան :

Բ. Ամէն Հայազգի անձը կրնայ այս ընկերութեան մասնակց ըլլալ . շաբաթ իւր ունեցած վաստակի քառասունի մէկ մասը ընկերութեան վճարելով :

Գ. Մինչեւ հինգ տարի շարունակ այս հաւաքուած ստակը առանց մոխելու շահեցուի վերոյիշեալ երկու գործակալաց ձեռամբ :

Դ. Գործակալները տարին անգամ մը հաշիւ պիտի տան նոյն կողմի գտնուած եկեղեցապանաց եւ նշած գումարը բոլոր ժողովուրդեան ծանուցուի :

Ե. Գանձապետ մինչեւ շաբթու գլուխ առած եւ հաւաքած ստակը օգտակար կերպով շահեցընէ . եւ տեղեկութեամբ գրագրին գրել տայ տօմարի մէջը :

Զ. Գրագիր մի եւ նոյն օրուան եկած արդիւնքը ամսաթուով գրէ օրական տօմարի մէջը . մինչեւ տարին լրանայ եւ հաշիւ տալէն յետոյ՝ տարեկան տօմարին մէջը պիտի գրէ հանդերձ նոյն տարուան շահովը :

Է. Մինչեւ հինգ տարին լրանալը թէ դպրատուններ եւ թէ աղքատներ ինչ կերպով մինչեւ ցարդ որ կը կառաւարուին՝ նոյն կերպով պիտի կառավարուին առանց ընկերութեան եկամուտին դպչելու :

Ը . Աղքատասիրաց ընկերութեան հինգ տարին որ լրանայ՝ այնուհետեւ եղած եկամուտը անշարժ կալուածքի ծախս պիտի ընէ ընկերութիւն . եւ անոնց եկած շահովը պիտի հոգայ իւր կողմի եկեղեցւոյ դպրատան ծախքը . եւ կարօտեալ աղքատաց հարկաւոր պիտոյրքը քահանայից դիտութեամբ :

Թ. Այս ընկերութեան տուրք յարատեւ պիտի ըլլայ (թէ եւ հինգ տարին անգամ մը պայմանները պիտի նորոգուին) եւ օր ըստ օրէ ՚ի զարդացումն դիմելու բարենպաստակ բարեգործութեան պտուղներ պիտի վայելէ :

Ժ. Այս ընկերութեան տուրքը հոգեւոր ըլլալուն համար քահանայից վրայ պարտաւորութիւն դրուի թէ ծածուկ եւ թէ յայտնի յորդորել ժողովուրդը բաժանորդ գրուիլ . եւ մեռնելու հիւանդաց (որոնք որ կարողութիւն ունին) կտակ ընել տալ յօժարակամ նուէր այս շահաւէտ ընկերութեան, որն որ մեր ազգին պարծանք մը կրնայ համարուիլ այլակրօնից առջեւը, ըստ մարմնոյ . եւ պարծիլ ալ պիտի ըլլայ հանրակիան դատաստանին ըստ հոգւոյ . ինչպէս կը վկայէ սրբազան առաքեալը թէ « Արդմութիւն բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ » :

Ընթերցասիրաց ընկերութեան պայմանները :

Ա. Ընթերցասիրաց ընկերութեան համար ամէն կահ կարասեօք զարդարուած մաքուր սենեակ մը նպատրաստուած պիտի ըլլայ. ուր ղետեղութիւն ազգային ամէն տեսակ հին եւ նոր տպեալ եւ ձեռագիր գրքեր, տետրակներ եւ լրագրեր :

Բ. Ընթերցասիրաց ընկերութեան բաժանորդ գրուողը տարին 25 դուռուշ պիտի վճարէ կանխիկ :

Գ. Այս ընկերութիւն մասնաւոր ժողով մը պիտի կազմէ ընկերութեան անդամներէ բաղկացեալ. որոնք երաշխաւոր պիտի ըլլան հաւաքուած բոլոր ստակին :

Դ. Ընկերութեան ժողով գործակալ մը պիտի կարգէ ամսականով. որուն ձեռքը յանձնուի ընկերութեան ստակը :

Ե. Ընկերութեան գործակալ եկամտից եւ ծախուց տօմար մը պիտի ունենայ եկած ստակները եւ եղած ծախքը ամսաթուով յականէ անուանէ գրելու :

Զ. Ընկերութեան ժողովը գործակալի ձեռքով առնել պիտի տայ հին տպեալ եւ գրչայ եւ նոր գրքեր եւ տետրակներ եւ ազգային բոլոր լրագրեր շաբթէ շաբաթ ստանայ՝ եւ ղետեղէ սենեկի մէջը :

Է. Ընթերցասիրաց ընկերութեան բաժանորդ գրուող անձը որ ժամանակ որ ուզէ՝ կրնայ երթալ ընկերութեան սենեակը ուղած գիրքը կամ լրագիր ուզէ գործակալէն եւ լռութեամբ կարգայ, թողու եւ երթայ. վասն զի սենեկէն գիրք կամ լրագիր դուրս պիտի չը հանուի :

Ը. Ընկերութեան բաժանորդ գրուողը պիտի ըլլայ Լուսաւորչակիօն Հայազգի. եւ վարութեն ալ պարկեշտ եւ ուսումնասէր :

Թ. Ընկերութեան գործակալ տարին անգամ մը հաշիւ տայ ընկերութեան ժողովոյն . եւ ժողովն ալ՝ կերպով մը տեսնուած հաշիւը հաղորդէ բոլոր անդամոց :

Ժ. Ընթերցասիրաց ընկերութեան ժողով՝ կախիալ պիտի ըլլայ Հոգեւորական ժողովէն. ուստի ազգային որ եւ իցէ գործոց վրայօք զգուշանայ պիտի խօսք մը անգամ առարկայ ընելու եւ խօսելու . թէ քաղաքական , եւ թէ Հոգեւորական . եւ ինչ գէպք որ պատահի՝ Հոգեւորական ժողովոյն պիտի իմացընէ :

Գ. Ընթերցասիրաց ընկերութիւնը կրօնական վէճեր ընելէ պիտի զգուշանայ . բայց տարակոյս ունեցած ժամանակը՝ հմտութիւն ունեցող անձի մը կրնայ տարակոյսը լուծել տալ :

ԺԲ. Սենեկի մէջի զետեղուած գրքեր եւ լրագրիք մաքուր պիտի մնան. ուստի ով որ աղտոտէ կամ վնասէ՝ գինը կանխիկ պիտի վճարէ ընկերութեան եւ առնէ իւր՝ նոյն վնասած գիրքը :

ԺԳ. Ով որ այս ընկերութեան նուէր մը տայ . թէ հին եւ նոր գրքերէ եւ թէ ազգասիրական ոգորմութիւն մը շնորհէ՝ հանդերձ գովութեամբ պիտի հրատարակուի նորին պայծառ համբաւը լրագրաց միջոցաւ :

ԺԴ. Ընթերցասիրաց ընկերութեան կեդրոն յարմար եւ ապահով տեղ մը պիտի ըլլայ եւ անկէ շատ ճիւղերու ալ կրնայ բաժնուիլ մի եւ նոյն նահանգի մէջը :

ԺԵ. Ով որ այս ընկերութեան բաժանորդ գրուած չէ՝

անկարելի է որ երթայ գիրք կամ լրագիր առնէ սենեակէն
եւ կարգայ :

ՎԵՐՋՔԱՆ :

Առ սյժմայս չորս ընկերութեան վրայօք առաջարկած
գործադրելու համառօտ կանոններս բաւական կը համարիմ.
բայց եթէ Աստուած յաջողէ 'ի գործ դրուեցաւ՝ այն
ժամանակ երկարօրէն եւ ընդարձակ պայմանական կանոն-
ներով կը հաստատուի մի եւ նոյն ընկերութիւնը : որոնք
անտարակոյս պիտի ըլլան Հայրենեաց մշտնջենական երջան-
կութեան առիթ մը . ինչպէս որ կը վայելէ Բիւնկեան գիւղի
բնակիչն . նոյն գիւղի Ազգասէր երեսելի Անձի մը ջա-
նիւք :

ՄԵՐՈՎԷ Քահանայ Ժողովուրդ :

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ո՛ր ան գիւնոյ է - արբեցութեան :

Քիչ խմիր կու հարբեցնէ , գինի է՝ ոչ թէ թթու թան .
խմողին կ'ըրբացնէ , թէ իշխան լինի . թէ Սուլթան :

Ազգատին հարուստ կու ջինէ , կոյր մարդին սրտոնս կանի
կաղին ոտ կուտայ , խուլին ունկ , յիմարին Սոկրատէս կանի
Մարդոյ Հաստատ բնութիւնը կու փոփոխի՝ պէսպէս կանի
Որչափ երկար կիանք ունենայ , համարեա՝ միջիցն կէս կանի
Վախլուկ մարդն՝ թէ որ խմեց , կու լինի պատառող զազան ,
Ինչ մարդ խմելուց հա՛ղ արաւ , նորա քէսէն ծակ կու լինի ,
(Չունքի) խմիչք փողի հետ , կասեն , հակառակ կու լինի ,

Արեւոյդի որդիքն գող՝ կինն անառակ կու լինի,
 Ինչքան պատուելի մարդ լինի՝ վերջն խայտառակ կու լինի,
 Ահեղ ատենն օրն նա սեւերես կերթայ դատաստան,

Արեւոյդի տան միջից վրդովմունք անպակաս է,
 Եթէ մին ծածուկ խօսք ասես՝ հրապարակի մէջ կասէ,
 Նորայ հետ ընկերանալն մարդոյ պատուին շատ վնաս է,
 Որ տեղ մէջն փոս բան տեսնի՝ կու կարծէ թէ գինոյ թաս է,
 Թէ կինն նամուսով էլաւ, սաղ կու մտանէ գերեզման :

Ս'եր փրկիչն գինին էնտուր գրաւ իւր արեան փոխանակ,
 Որ բրնձոտեայքն խմելիս նորան չափ դնեն եւ բանակ,
 Խեղօք մարդին բաւական է ամենայն օր մէկ ըմպանակ :
 Անչափ խմողն Քոստոսին յայտնի մորթում է անդանակ,
 Արեւոյդի ըստ իմ կարծեաց է բնակիչ գթօխական :

Արեւոյդի հետ ով որ օր ունենայ հաշիւ առաւտուր,
 Էնպէս կարծէ իր փողի մէջ կապեց մին սաստիկ վազկան ջուր
 Նորա դէմքն չի ծիծաղիլ միշտ դառնայեալ կու լի տխուր,
 Թէ գիտուն ես այս մասին, դու իմ խրատներիս ախանջ տուր
 Եթէ ոչ վերջն՝ կախտես, երբ որ կուլիս թշուառական :

Սէյադի խօսքն քարոզ է, նրան դու լաւ ականջ արա՛,
 Ով որ նորան ականջ դնէ՝ երանութեան բարեբարայ,
 Գինի եւ կին բաւից միտքն միմեանց հետն յարմարայ,
 Ով որ նրանց ծառայ եղեւ, (դուզ) ճամբից կուլի աւարայ
 Երկուն ալ այս աշխարհումս մեծ մեքենայ են դիւական :

ՊԵՏՐՈՍ Տ. ՅԱՆՆԻՔԵԱՆ ՄԱՐԿԱՅԵԱՆ
 ԶԱՄԱՆԵՑԻ ՍԵՅԵԱԴ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱՆ

Երբեք չի տեսնուի Արարի ան ԱՊԱՐԱՆՔԱՆ
Աշխարհ, ի ԼեռնաՋրն վարագայ :

Խոխոջացող բարաւազ,
Մի սողոսկեր շուտափայլած.
Ապա դու վայրիկ ՚ի համբեր,
Ցաւագնելոյս լեր ընկեր.
Թառաչ սրտիս սգակիր,
Խոր Թախծութեամբ զիս պատեաց.
Աղի վիճակս արտասուաց,
Այսից իմ գեղ ողորեաց.
Տուր ինձ առուակ սիրելի,
Տուր արձագանգ ջայլանացս.
Կամ ՚ի վտակդ ծաւալուն,
Չիմիս խառնեա բիժ աչաց.
Բարձեալ ՚ի Թեզ կարկաջուն
Դարագլոր տար ՚ի բաց.
Տար եւ խառնեա այդ աւանդ,
Աղի ծովուն կոհակաց.
Երկինք վկայ անբարբառ
Քաւտենից կացցէ դար,
Թէ ոստանիկն Էռչան,
Մեծակական աստ ելայ.
Քաղցր էր նմին շանթաճիք
Բառնիլ յերկրէ կենդանւոյն,
Քան իւր սիրուն Հայրենեաց
Գաղթեալ գնալ ո՛հ տխուր :

Բարձրակատար սուրբ լերինք
 Օ՛ն գթացեալ կալայք զիս :
 Փակեալ 'ի խորս ձեր հողով
 Քուէն ննջեցից յաւիտեան :
 Մի զիս թողուք տարամերժ
 Յերկիրըն խորթ սեռաստեան
 Մի կոխեցից օտար հող,
 Յոր չեն նախնեաց իմ ոսկերք :

* * *

Մարտ ամսոյ հանելուկն Արգոյ ընթերցողներէն մէկն
 լուծելով՝ մեզի խրկելէ՝ եւ կ'խնդրէ, որ նոյն ձեւով սոյն
 թերթիս մէջը հրատարակուի :

Բաղասարգիս Մարտ ամսոյս հանելուկին .

Գըլանատիպ իբր կոթող,
 Է ծխնելոյղ (սօպա) միշտ հուր լափող .
 Յինքեան կըրէ չաստուած հզօր
 Պաշտեալն երբեմն պարսից յար զօր .
 Ունի ծակունս 'ի վեր 'ի կոր,
 Ուստի բուրեն ծուխ սեւաւոր .
 Ծխեալ ձօնէ կանգնահովով,
 Արհմն օրմիգդ չաստուծոց հօր :

Մ. Բ. Փ.